ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Արտյոմ Մխոյանի և ՀՀ արդարադատության նախարարության քրեկատարողական ծառայության պետ Հայկ Քոչինյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Ռյազան) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Արտյոմ Մխոյան և Հայկ Քոչինյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Ռյազան), 2018 թվականի նոյեմբերի 27-29-ը:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի պատիժների կատարման դաշնային ծառայության Դաշնային քրեակատարողական կրթահամալիրի իրավունքի և կառավարման բարձրագույն կրթության ակադեմիա:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ռուսաստանի Դաշնությունում և արտերկրում քրեակատարողական համակարգի զարգացման տեսական և գործնական խնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանսին:

Քննարկված թեմաները՝ «Ռուսաստանի Դաշնությունում և արտերկրում քրեակատարողական համակարգի զարգացման տեսական և գործնական խնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանսի շրջանակում քննարկվել են քրեակատարողական քաղաքականության հիմնական ուղղությունների կատարելագործմանն ու զարգացմանը, ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարմանը և անազատության մեջ պահվող անձանց սոցիալ-հոգեբանական օգնությանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ռուսաստանի պատիժների կատարման դաշնային ծառայության Դաշնային քրեակատարողական կրթահամալիրի իրավունքի և կառավարման բարձրագույն կրթության ակադեմիայի հրավերով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի գլխավորած պատվիրակությունը 2018 թվականի նոյեմբերի 28-ից 29-ը Ռուսաստանի Դաշնությունում (Ռյազան) մասնակցել է

«Ռուսաստանի Դաշնությունում և արտերկրում քրեակատարողական համակարգի զարգացման տեսական և գործնական խնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանսին:

Միջազգային գիտագործնական կոնֆերանսի շրջանակներում քննարկվել են քրեակատարողական օրենսդրության կատարելագործմանը, պենիտենցիար ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կադրային արդյունավետ քաղաքականության մշակմանը, քրեակատարողական հիմնարկների կառավարման ոլորտում արդիական գործիքակազմ ներդնելու հնարավորությունների քննարկմանը, ինչպես նաև միջազգային պենիտենցիար համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Գիտագործնական կոնֆերանսի հիմնական նպատակն է եղել պենիտենցիար քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջադեմ փորձի ուսումնասիրության իրական հնարավորության ստեղծումը և ներպետական օրենսդրության կառուցակարգերում ըստ նպատակահարմարության դրանց տեղայնացումը:

Միջազգային գիտագործնական կոնֆերանսին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Արտյոմ Մխոյանը, ով, ողջունելով մասնակիցներին, ներկայացրել է ՀՀ քրեակատարողական ծառայության զարգացման հեռանկարները, անդրադարձել է քրեակատարողական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք անկյունաքարային և խնդրահարույց հարցերի՝ ներկաներին առաջարկելով ներկայացնել կառուցողական առաջարկներ:

Ելույթի ավարտին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետը շնորհակալական խոսքեր է հղել ՌԴ պատիժների կատարման դաշնային ծառայության դաշնային քրեակատարողական կրթահամալիրի իրավունքի և կառավարման բարձագույն կրթության ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-մայոր Ալեքսանդր Կրիմովին՝ համաժողովը բարձր մակարդակով կազմակերպելու համար՝ հույս հայտնելով, որ նմանատիպ հանդիպումներն արդյունավետ պայմաններ կստեղծեն քրեակատարողական ոլորտում միջազգային համագործակցությունն ամրապնդելու համար:

Հարկ է նաև նշել, որ երկօրյա հագեցած աշխատանքային համաժողովի շրջանակներում Ա. Մխոյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնապես հյուրընկալվել է նաև Ա. Կրիմովին: Պաշտոնական հանդիպման ընթացքում քննարկվել են ՌԴ պատիժների կատարման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայողների ուսումնառության և վերապատրաստման հնարավորությունները, 2019թ-ին կայանալիք «Հանցագործություն, պատիժ, ուղղում» խորագրով 4-րդ միջազգային պենիտենցիար ֆորումին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնակցության ձևաչափը, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ բազմաթիվ հարցեր:

Կոնֆերանսի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է քրեակատարողական համակարգի կադրային քաղաքականության զարգացում, քրեակատարողական ծառայության հոգեբանական ծառայության գործունեության կատարելագործում, դատապարտյալների հետ սոցիալական աշխատանքների կատարելագործում և հետաքրքրություն ներկայացնող այլ կլոր-սեղան քննարկումների, որոնց մասնակցում էին նաև միջազգային հեղինակություն վայելող փորձագետներ, քրեական, քրեակատարողական և հոգեբանական գիտությունների անվանի գիտնականներ: Պատվիրակության կողմից հատկապես կարևորվել է որակյալ հոգեբանական ծառայություններ մատուցելու իրատեսական և արդյունավետ հնարավորությունները, որոնց շրջանակներում պենիտենցիար հոգեբանության ոլորտում պրակտիկ փորձ և հմտություններ ունեցող հոգեբան-գիտնականի հետ ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն՝ քրեակատարողական ոլորտում արձանագրված հաջողություններով կիսվելու և անհրաժեշտության դեպքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հոգեբանների վերապատրաստում կազմակերպելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ **ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ**

03.12.2018թ